Հաստատում եմ

Տնօրեն՝ Ն. Խաչատրյան

« 01 » սեպտեմբեր 2023թ.

**«Հայկասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ**
**2023-2024 ուստարվա**
**6-րդ, 9-րդ դասարանների դասղեկի**
**աշխատանքի պլանավորում**

**Դասղեկ՝ Արփինե Հովհաննիսյան**

| Համար | Աշակերտի ազգանունը, անունը, հայրանունը | Դպրոց ընդունման տարեթիվը, հրաման թիվ | Աշակեր-տական շարժի համարը | Ծննդյան թիվը | Ամիսը | Օրը | Սեռը | Հասակը | Քաշը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Սարգսյան Լարիսա Կարենի | 2018 № | | 2012 | 06 | 21 | իգ. | 145 | 43 |
| 2. | Գրիգորյան Գոռ Գևորգի | 2015 №055 | 88 | 2009 | 02 | 12 | ար. | 165 | 47 |
| 3. | Սարգսյան Գյուլնարա Վահագնի | 2015 №055 | 89 | 2009 | 09 | 01 | իգ. | 170 | 66 |

| Համար | Հասցեն | Հեռախոսի համարը | Ծնողի (օրինական ներկայացուցչի) աշխատանքի վայրը կամ զբաղմունքը | Ընտանիքի սոցիալական վիճակը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | գ. Հայկասար,1-ին փողոց, տուն 1 | 098983870 | Աշխատում է գյուղի այլընտրանքային մանկապարտեզում՝ որպես դաստիարակչուհի: | լավ | |
| 2. | գ. Հայկասար, 1-ին փ., 3-րդ նրբ., տուն 1 | 077741410 | Տնային տնտեսուհի է: | լավ | |
| 3. | գ. Հայկասար, 1-ին փ., 2-րդ նրբ., տուն 4 | 094180061 | Աշխատում է գ. Հայկասարի համայնքապետարանում՝ որպես հավաքարար: | լավ | |

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**1.Ներածություն. դասարանի ընդհանուր բնութագիրը-** 6-րդ դասարանում սովորում է 1 աղջիկ,
9-րդում՝ 2 աշակերտ՝ 1 աղջիկ և 1 տղա: Դասարանում ձևավորված է առողջ, միասնական և ամուր կոլեկտիվ: Աշակերտների հետ տարվում են կրթական և դաստիարակչական աշխատանքներ: Նրանք շատ լավ գիտեն դպրոցի կարգն ու կանոնը, իրենց իրավունքներն ու պարտականությունները:

**2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում** Պետք է իրականացնել հայեցի գեղագիտական, բարոյական, հայրենասիրական, սպորտային, քաղաքացիական դաստիարակությանը նպատակաուղղված միջոցառումներ, բաց դասեր, բանավեճեր, երեխաների հայացքների, մոտեցումների բացահայտման ուղղությամբ քայլեր: Կարևորագույն միջոցը դասապրոցեսն է, որի ընթացքում երեխաներին տրվում են գիտելիքներ, հմտությունների զարգացում, կարողությունների դրսևորում, նախաձեռնության, ինքնուրույնության, հանդուրժողականության խթանում:

**3. Հայեցի դաստիարակություն**

**3.1 Հոգևոր դաստիարակություն-** Ազգային հոգևոր դաստիարակության նպատակն է աշակերտների մեջ սեր և հարգաք սերմանել կյանքի հոգևոր արժեքների նկատմամբ, որ կարողանան սահմանազատել հոգևոր և նյութական արժեքները:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն:** Ազգային էթնոմանկավարժության փորձն ու ավանդույթները դպրոցականին փոխանցելը գեղագիտական դաստիարակության միջոց է: Այն իրականացնել հնարավոր է կինոդիտումների, ստեղծագործությունների ընթերցումների, քննարկումների, մշակութային օջախներ այցելելու միջոցով:

**3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը** հնարավոր է իրականացնել զրույցների, համապատասխան ստեղծագործությունների ընթերցումների և քննարկումների միջոցով: Հայրենասիրական երկերը ևս կարող են դրականորեն անդրադառնալ աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության վրա: Հայրենիքի հանդեպ ձևավորել ջերմ ու նվիրական սեր:

**3.4 Ֆիզիկական դաստիարակությունը** հանդիսանում է դաստիարակության կարևորագույն բաղադրամաս և մեծ նշանակություն ունի անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում: Ֆիզիկական դաստիարակության բազմաբնույթ խնդիրներն իրականացնելիս պետք է հաշվի առնել աշակերտի տարիքային առանձնահատկությունները:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն:** Դաստիարակել սեր աշխատանքի նկատմամբ, հասնել այն բանին, որ աշխատասիրությունը վերածվի ամենօրյա սովորույթի, անհրաժեշտության:Աշխատանքային դաստիարակության նպատակները բազմազան են, ուստի և պետք է յուրաքանչյուր երեխային ցուցաբերել անհատական մոտեցում:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն:** Աշակերտներին հաղորդել էկոլոգիական գիտելիքներ:Նրանք պետք է գիտակցեն, որ բնությունը ազգային, հասարակական հարստություն է և պետք է պահպանել ու խնամքով վերաբերվել նրան:

**4. Դպրոց-ընտանիք կապը**: Կարևորագույն հիմախնդիրն է դպրոց-ընտանիք կապի մշտապես պահպանումը, քանզի մեկն առանց մյուսի չի կարող լիարժեք դրսևորվել, դրանք լրացնում են միմյանց և երկուսի գործելու դեպքում արդյունքն ակնհայտ կլինի:

## Դասարանական ծնողական խորհրդի կազմը

**նախագահ՝** Սիմոնյան Մառուսյա

**անդամներ՝** 1. Մկրտչյան Սոֆյա
2. Հակոբյան Նաիրա

## Դասարանական աշակերտական խորհրդի կազմը

**նախագահ՝** Սարգսյան Գյուլնարա

**անդամներ՝** 1. Սարգսյան Լարիսա
2. Գրիգորյան Գոռ

# Ծնողական ժողով

| Հ/Հ | Քննարկվող հարցեր | Ամիս, ամսաթիվ |
|---|---|---|
| 1. | Դասարանական ծնողական խորհրդի և կարգապահական հարցերի քննարկում: | 05.09.2023թ. |
| 2. | 1. Ուսման առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում<br>2. Պատմաշակութային էքսկուրսիայի կազմակերպում | 03.11.2023թ. |
| 3. | Ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում | 22.12.2023թ. |
| 4. | 1. Կարգապահական հարցերի քննարկում<br>2. Ուսման առաջադիմության և բացակայությունների հետ կապված հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ հարցեր | 14.03.2024թ |
| 5 . | 1. 2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների ամփոփում<br>2. Ընթացիկ հարցեր | 23.05.2024 |

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Հ/Հ | Ուսումնադաստիրակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Գիտելիքի օր:Սովորողների մուտքը դպրոց | 01.09.2023 | դասղեկ աշակերտներ |
| 2. | Նոր ուստարվա անելիքների պլանավորում, կազմակերպչական հարցերի քննարկում, զրույց ծնողխորհրդի հետ | 07.09.2023 | դասղեկ աշակերտներ |
| 3. | «Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները» թեմայի շուրջ զրույցի անցկացում | 14.09.2023 | դասղեկ |
| 4. | «Ճանաչենք մեր հայրենիքը» թեմայի քննարկում | 20.09.2023 | դասղեկ աշակերտներ |
| 5. | Մեդիագրագիտության դերը աշակերտի կրթության և զարգացման գործում: «Ինչպե՞ս օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաներից և ինչո՞ւ…». Այս և նման հարցերի քննարկում | 28.09.2023 | դասղեկ |
| 6. | Ուսուցչի տոնի մասին | 05.10.2023 | աշակերտներ դասղեկ |
| 7. | Սովորողների առաջադիմության քննարկում | 12.10.2023 | դասղեկ |
| 8. | Ընկերասիրության և մարդասիրության մասին զրույցի անցկացում՝ համապատասխան նյութերի ընթերցման միջոցով | 19.10.2023 | դասղեկ աշակերտներ |
| 9. | Աշնանային արձակուրդի ընթացքում հանձնարարված որևէ գրքի (աշակերտի ընտրությամբ) ընթերցումից հետո ստեղծագործության բովանդակության քննարկում | 30.10.2023 | աշակերտներ |
| 10. | Գեղագիտական ճաշակի ձևավորում (կարևորելով մշակութային որևէ վայրի այցելությունն ու նշանակությունը): Էքսկուրսիայի անցկացման շուրջ կազմակերպչական հարցերի քննարկում | 02.11.2023 | դասղեկ |
| 11. | «Իմ հայրենիքը» թեմայով մտքերի ու կարծիքների փոխանակություններ: Գրավոր շարադրանքի կազմում վերոնշյալ թեմայով: | 09.11.2023 | աշակերտներ |
| 12. | Իմ վարքը տանը և շրջապատում: «Բնավորություն» և «խառնվածք» հասկացությունների մասին զրույց - բանավեճի կազմակերպում | 16.11.2023 | դասղեկ աշակերտներ |
| 13. | «Եթե կարողանայի, ի՞նչը կփոխեի…». այս հարցի շուրջ քննարկումներ, խնդիրների բարձրացում և դրանց լուծումների համար հնարավոր ուղիների փնտրում | 23.11.2023 | աշակերտներ |
| 14. | Մրցակցային միջավայրի ապահովում սովորողների մեջ՝ քննարկելով ընթացիկ առաջադիմության, լավ ու վատ սովորելու հետ կապված հարցեր | 30.11.2023 | դասղեկ |
| 15. | Երկրաշարժի զոհերի հիշատակի օր: «Բնական աղետներ. ի՞նչ է երկրաշարժը» թեմայի ուղղությամբ զրույցի անցկացում | 07.12.2023 | դասղեկ |
| 16. | «Ընկերոջ դերը մեր կյանքում» մտքի շուրջ կարծիքների փոխանակության անցկացում | 14.12.2023 | դասղեկ աշակերտներ |
| 17. | Ամանորի խորհուրդը: Դասասենյակի ամանորյա | 21.12.23 | դասղեկ, |

| | | | |
|---|---|---|---|
| | տրամադրության ու տեսքի բերելու կազմակերպչական աշխատանքների անցկացում | | աշակերտներ |
| 18. | Երկրորդ կիսամյակում կատարվելիք աշխատանքների մասին քննարկումներ սովորողների հետ՝ անհրաժեշտության դեպքում նոր առաջարկությունների ընդունում | 11.01.2024 | դասղեկ |
| 19. | Պարույր Սևակի 100-ամյա տարելիցի կապակցությամբ պոեզիայի ժամի անցակում: Ընթերցումներ գրողի ստեղծագործություններից ու քննարկումներ | 18.01.2024 | դասղեկ աշակերտներ |
| 20. | Հայոց բանակի մասին, դրա դերն ու նշանակությունը՝ որպես հայության պահպանության միակ ու անփոխարինելի հենարան | 25.01.2024 | դասղեկ |
| 21. | «Աշխատանքը ծնում է բարիքներ». զրույց աշխատասիրության մասին | 01.02.2024 | դասղեկ |
| 22. | Տյառնընդառաջի խորհուրդը քրիստոնյայի կյանքում | 15.02.2024 | դասղեկ |
| 23. | Թումանյանական օրերի շրջանակներում՝ «Գիրք նվիրելու» տոնին ընդառաջ | 22.02.2024 | դասղեկ աշակերտներ |
| 24. | «Մարդ մնալու արվեստը» խորագրով փոքրիկ ցերեկույթի անցկացում: Հիմքում հոբելյանական 3 հանճարների՝ Պարույր Սևակի, Հովհաննես Շիրազի և Համո Սահյանի խոհերը | 29.02.2024 | աշակերտներ դասղեկ |
| 25. | Պաստառի պատրաստում՝ Կանանց միջազգային տոնի կապակցությամբ | 07.03.2024 | աշակերտներ |
| 26. | «Բնությունն ու մարդը՝ գարնան զարթոնքին» խորագրով զրույցի անցկացում | 14.03.2024 | աշակերտներ դասղեկ |
| 27. | 'Ստախոսությունը աններելի չարիք է' կարգախոսի խորհուրդը | 21.03.2024 | դասղեկ |
| 28. | Սուրբ Զատկի խորհուրդը և եկեղեցու դերը մեր կյանքում | 04.04,2024 | դասղեկ |
| 29. | Զրույց Մայրության և գեղեցկության տոնի մասին | 11.04.2024 | դասղեկ աշակերտներ |
| 30. | Հանգստի և ժամանցի կազմակերպում բնության գրկում | 18.04.2024 | դասղեկ աշակերտներ |
| 31. | Մեծ եղեռն. 1915-ի անմեղ զոհերի հիշատակին | 25.04.2024 | դասղեկ |
| 32. | Մայիսյան հերոսամարտեր. նյութերի քննարկում՝ մեր ազգի հերոսական էջերից | 02.05.2024 | դասղեկ |
| 33. | Երկրորդ կիսամյակի և տարեվերջյան աշխատանքների ամփոփում, առաջադիմության, բացակայությունների հետ կապված հարցերի քննարկում, նախապատրաստական աշխատանքների անցկացում | 16.05.2024 | դասղեկ |
| 34. | Վերջին դասի անցկացում | 23.05.2024 | աշակերտներ դասղեկ |

## Դասղեկի աշխատանքի բնույթը, մանկավարժական գործառույթները, նպատակը և աշխատանքի ուղղությունները

**Դասղեկները դասարանի հետ հիմնական աշխատանք վարողներն են:**
**Գործունեության շրջանակը ենթադրում է հետևյալ աշխատանքները.**

**1.Դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում՝**

• հետևում է աշակերտների հաճախելիությանը (մատյանում նշում է բացակայությունները, հետևում է, որ դրանց համար փաստաթուղթ ներկայացվի),

• աշխատում է առարկայական ուսուցիչների հետ՝առաջադիմության բարձրացման ուղղությամբ (պարբերաբար ստուգում է օրագրերը, վերլուծում է ընթացիկ և վերջնական գնահատականները)

• հետևում է աշակերտների կարգապահությանը:

**2. Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում՝**

• կազմակերպում է դասարանական ժողովներ,

• կազամկերպում է կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ,

• կազմակերպում է այցելություններ թատրոն, համերգասրահ, թանգարաններ, ցուցահանդեսներ:

**3. Սովորողների հանրօգուտ աշխատանքի (դպրոցամերձ տարածքի մաքրում և այլն) կազմակերպում:**

**4. Աշխատանք սովորողների ծնողների հետ՝**

• ծնողներից ակնկալում է, որ հետևեն երեխայի առաջադիմությանը,

• ծնողների հետ անհատական զրույցներ է ունենում,

• ծնողական ժողովներ է կազմակերպում:

**5. Ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին՝**

• ծանոթանում է սովորողների ընտանիքի կազմին,

• նրանց բնակարանային և կենցաղային պայմաններին,

• բարոյահոգեբանական պայմաններին:

**6. Դասարանի աշակերտների սննդի կազմակերպում (նյութական օգնության կազմակերպում):**

**7. Թղթավարություն՝**

ա. Ամփոփում է աշակերտների առաջադիմության տվյալները,

բ. Լրացնում·է դասամատյանը,

գ. Լրացնում է անձնական գործերը,

դ. Մշակում է դասղեկի աշխատանքային պլան:

**8. Աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների խորացման ուղղությամբ:**

## Դասղեկական ժամի դաստիարակչական գործառույթները

**Դասղեկական ժամը** աշակերտների հետ դաստիարակչական աշխատանքի կազմակերպման
կարևորագույն ձևերից մեկն է: Այն ներառվում է դասացուցակի մեջ և անց է կացվում յուրաքանչյուր շաբաթ՝ որոշակի օր: Դասղեկական ժամի ձևերը տարբեր են. դասախոսություն, զրույց, բանավեճ, վիկտորինա, մրցույթ, խաղ, կոնֆերենս, հեռակա ճանապարհորդություն, տոն և այլն: Դասղեկական ժամը կատարում է հետևյալ դաստիարակչական ֆունկցիաները. կրթական, կողմնորոշման, ուղղորդման և ձևավորման:

**Կրթական ֆունկցիա -** կարևորվում է նրանով, որ դասղեկի ժամը ընդլայնում է աշակերտների գիտելիքների շրջանակը: Դասղեկական ժամի առարկա կարող են հանդիսանալ գիտությունների տարբեր ոլորտներից բերված տեղեկությունները, սոցիալական կյանքի երևույթները, երեխաների հոգեբանական խնդիրները:

**Կողմնորոշող ֆունկցիա**-նպաստում է իրադարձություններին և երևույթներին բարոյական գնահատական տալու ժամանակ՝ հենվելով բարոյական և հոգևոր արժեքների վրա, աշակերտների մոտ աշխարհի հանդեպ որոշակի վերաբերմունքի ձևավորմանը: Հաճախ դասղեկական ժամերը օգնում են աշակերտներին կողմնորոշվել հասարակական արժեքների մեջ:
**Ուղղորդող ֆունկցիա** – դասղեկի ժամի այս ֆունկցիան նախատեսում է աշակերտների գործունեության կազմակերպում՝ ազդելով նրանց վարքագծի վրա, որպեսզի գիտելիքները վերածվեն համոզմունքի:
**Ձևավորող ֆունկցիա** – արտահայտվում է աշակերտների մոտ իրենց արարքների և իրենք իրենց գնահատելու կարողության ձևավորման մեջ, օգնում է վարել երկխոսություն, շարադրել փաստերով, արտահայտել սեփական կարծիքը: Հաճախ դասղեկի ժամը միաժամանակ կատարում է նշված բոլոր չորս ֆունկցիաները. Այն և՛ կրթում, և՛ կողմնորոշում, և՛ ուղղորդում, և՛ ձևավորում է աշակերտներին: Այս ֆունկցիաները հնարավորինս պետք է արտացոլվեն դաստիարակչական միջոցառման նպատակի ձևակերպման մեջ:
**Դասղեկի ժամերի թեմատիկան տարբեր է: Դասղեկի ժամերը կարող են նվիրվել.**
- բարոյաէթիկական
- գիտության և իմացության
- գեղագիտական
- պետության և իրավունքի
- հիգենայի և առողջ ապրելակերպի
- հոգեբանական
- բնապահպանական
- համադպրոցական /կարևոր հասարակական իրադարձությունների, տոնական օրերի/ խնդիրների:

**Դասղեկի խնդիրը** – ստեղծել մանկավարժական տարածք երեխայի ինքնության զարգացման, նրա ներաշխարհի հարստացման համար:
Լավ է,
- երբ երեխաների հետ շփվելիս դասղեկ- մանկավարժը կառաջնորդվի յուրահատուկ կանոնակարգով, որը իր մեջ ներառում է այսպիսի կանոններ.
- Սիրել երեխաներին
- Երբեք չմոռանալ խրախուսել երեխաներին լավ արարքի համար
- Երբեք չհամեմատել երեխաներին
- Չունենալ սիրելիներ
- Երբեք չբողոքել երեխաներից
- Կարողանալ ներել
- Կարողանալ օգնել
- Կարողանալ համբերել և սպասել
- Կարողանալ հետաքրքիր մարդ լինել
- Կարողանալ սիրով պահանջել և սիրել պահանջելով
- Կարողանալ յուրաքանչյուրի համար բարի խոսքեր գտնել
- Կարողանալ ընդհանուր լեզու գտնել ուսուցիչների և ծնողների հետ
- Կարողանալ ցանկացած աշխատանք կատարել երեխաների հետ
- Յուրաքանչյուր երեխայի մոտ գտնել կարևոր որակներ և ջանալ զարգացնել դրանք
- Ամեն ինչ հորինել նրանց հետ միասին, այլ ոչ թե՝ նրանց փոխարեն
- Սովորեցնել երեխաներին բարություն, պատասխանատվություն, հարգանք իրենց և մյուսների նկատմամբ:

Դասղեկությունը բավականին աշխատատար, բարդ գործ է: Միշտ պետք է զբաղվել երեխաների հետ, միշտ նոր սնունդ տալ նրանց ուղեղին, պատկերացմանը, հոգուն, արդյունքը երկար սպասել չի տա: Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.
2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժա-հոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.
3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.
4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն. 5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.
6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.
7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը: